Արձանագրություն 1

Տաշիր համայնքում 2025թ.-ին ստեղծված մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողովի նախապատրաստական փուլի արդյունքների նիստի

Ք. Տաշիր
18/04/202թ., 16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝

Նաթելլա Մուրադյանը - Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ,

Հանձնաժողովի անդամներ՝

Ասյա Հարությունյան - Համայնքապետարանի աշխատակազմի Սոցիալական աջակցության, առողջապահության, սպորտի, մշակույթի, երիտասարդության և կրթության բաժնի պետ,

Սևադա Սարգսյան - Համայնքի ղեկավարի խորհրդական,

Գոհար Մանուկյան - Ավագանու անդամ,

Համայնքի ակտիվ բնակիչ՝

Ինեսսա Խանաղյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Աստղիկ Բարոյան - Համայնքապետարանի աշխատակազմի Զարգացման ծրագրերի, առևտրի, սպասարկման, գովազդի և տուրիզմի բաժնի առաջատար մասնագետ

Օրակարգ

Տաշիր համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում նախապատրաստական փուլի ավարտի ամփոփում:

Լսեցին՝

1.Հանձնաժողովի նախագահի տեղակալ Նաթելլա Մուրադյանին՝

-ողջունեց հանձնաժողովի անդամներին, ներկայացրեց մասնակցային բյուջետավորման կարևորությունը, ընթացակարգը, սկզբունքներն ու նպատակները՝ արձանագրելով նախապատրաստական փուլի ավարտը:

2. Հանձնաժողովի քարտուղար Աստղիկ Բարոյանին՝

-ներկայացրեց նախապատրաստական փուլի ավարտի վերաբերյալ տեղեկատվությունը՝

- Տաշիր համայնքի 2025թ.-ի մարտի 27-ի N 26-Ա որոշմամբ սկիզբ է դրվել մասնակցային բյուջետավորման գործընթացին:
- Համայնքի ղեկավարի 2025թ.-ի ապրիլի 16-ի N 392-Ա որոշմամբ ստեղծվել է գործընթացի կառավարման հանձնաժողով, հաստատվել են հանձնաժողովի իրավասությունները, գործընթացի իրականացման ընթացակարգերը, չափանիշները և ձևաթղթերը:
- Կազմվել է միջոցառումների իրականացման ժամանակացույցը:

Լսելով հանձնաժողովի նախագահի տեղակալի և քարտուղարի ներկայացրած տեղեկատվությունը, քննարկելով հետագա անելիքները, Տաշիր համայնքի մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

1. Մասնակցային բյուջետավորման գործընթացի նախապատրաստական փուլը համարել ավարտված՝ դրական արդյունքներով,

2. Սկսել իրազեկման և առաջարկների ներկայացման փուլերը զուգահեռ՝ ժամկետը նշանակելով սույն թվականի ապրիլի 21-ից մինչև մայիսի 30-ը:

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Ն. Մուրադյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Բարոյան